

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ**  
**ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ**  
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 2/11**

ք. Երևան

15 հունվարի 2021թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության 03.09.2020թ.-ի N 4109/2020/ԿՈՒՎ4/Կ արձանագրության դեմ «ԱՌՅՈՒԾ ԱՐՔԱ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01811052) դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

«ԱՌՅՈՒԾ ԱՐՔԱ» ՍՊԸ-ի կողմից Հանձնաժողով է ներկայացվել դիմում-բողոք ՀՀ ՊԵԿ հարկային տեղեկատվության և ռիսկերի վերլուծության վարչության 03.09.2020թ.-ի N 4109/2020/ԿՈՒՎ4/Կ արձանագրության (այսուհետ նաև՝ Արձանագրություն) դեմ:

ՀՀ հարկային օրենսգրքի 440-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկային մարմնի ընդունած անհատական իրավական ակտը, ինչպես նաև հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողով՝ Օրենսգրքով սահմանված կարգով կամ դատարան:

ՀՀ հարկային օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի ընդունած և ուժի մեջ մտած անհատական իրավական ակտը կարող է բողոքարկվել այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում, իսկ հարկային ծառայողի գործողությունները կամ անգործությունը կարող են բողոքարկվել այն կատարելու կամ ցուցաբերելու օրվանից մեկ ամսվա ընթացքում:

Տվյալ դեպքում հիմք ընդունելով ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պաշտոնական էլեկտրոնային կառավարման համակարգից ստացված տվյալների՝ «ԱՌՅՈՒԾ ԱՐՔԱ» ՍՊԸ-ի 21.11.2019-18.03.2020թթ. 24% բաժնետեր Լիա Հունանյանը միաժամանակ 04.11.2019թ.-01.02.2020թթ. հանդիսացել է «Պումա» ՍՊԸ-ի 100% բաժնետեր: Հետևապես, «ԱՌՅՈՒԾ ԱՐՔԱ» ՍՊԸ-ն 21.11.2019թ.-ից չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող:

Միևնույն ժամանակ, «ԱՌՅՈՒԾ ԱՐՔԱ» ՍՊԸ-ին առաջարկվել է ներկայացնել 2019թ. Նոյեմբեր - 2020թ. հուլիս ամիսների ԱԱՀ-ի և ակցիզային հարկի միասնական հաշվարկները, ինչպես նաև 2019թ.-ի շահութահարկի տարեկան հաշվարկը:

Հարկ է նշել, որ Արձանագրությունը բողոքաբերի համար փաստական հետևանքներ չի առաջացնում, այլ դրանով վերջինիս ընդամենը տեղեկացվել է առկա խնդիրների վերաբերյալ և առաջարկվել է ներկայացնել համապատասխան հաշվարկ-հաշվետվություններ: Հետևապես՝ Արձանագրության դեմ բերված բողոքը չի կարող քննության առնվել ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովում:

Հանձնաժողովը գտնում է, որ ղեկավարվելով վերը նշված իրավանորմի դրույթներով դիմում-բողոքի քննարկման վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

### ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ԱՌՅՈՒԾ ԱՐՔԱ» ՍՊԸ-ի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



ՌԱՖԻԿ ՄԱՇԱԴՅԱՆ